

## Տ. ԲԱԲԿԵՆ ԱԲԵՂԱ ՍԱԼԲԻՅԱՆ

Ծնվել է 1965 թ. Երևան քաղաքում, ավազանի անունը՝ Միքայել:

1972-82 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի հմր. 133 միջնակարգ դպրոցը:

1983-85 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1986-88 թթ. աշխատել է ագրոքիմիայի ինստիտուտում:

1989-90 թթ. սովորել է Հաղպատավանքի դպրանոցում:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1992 թ. հունվարի 18-ին Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի: